

**«ԼՂՀ (ԱՐՑԱԽԻ) 25-ԱՄՅԱ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ  
ԱՐԴԻ ՄԱՐՏԱՅՐԱՎԵՐՆԵՐԸ»**

միջազգային երիտասարդական գիտաժողով  
15-18 սեպտեմբերի 2016թ.  
Արցախ (ԼՂՀ), ք.Ստեփանակերտ

**ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ**

**«25-ЛЕТИЕ ГОСУДАРСТВЕННОСТИ НКР  
(АРЦАХА):  
ДОСТИЖЕНИЯ И СОВРЕМЕННЫЕ ВЫЗОВЫ»**

международная молодёжная конференция  
15-18 сентября 2016г.  
Арцах (НКР), г.Степанакерт

**СБОРНИК МАТЕРИАЛОВ**

ԱԵԳՄՄ-ՕՄՍԱ  
ԵՐԵՎԱՆ-ԵՐԵՎԱՆ  
2016

*Հրատարակության է երաշխավորվել Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոց  
համալսարանի Գիտական խորհրդի որոշմամբ  
Рекомендовано к публикации решением Ученого совета  
Университета Месроп Маштоц г.Степанакерта*

ՀՏԴ 94(479.25):32.001:342:06  
ԳՄԴ 63.3 (53)+66.0+67.400  
L 657

### **Խմբագրական խորհուրդ**

ի.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ ակադ. **Գ.Ս.Ղազինյան** (նախագահ), փ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ **Ա.Ս.Սանասյան**, հ.գ.դ., պրոֆ. **Յ.Մ.Ավանեսյան**, պ.գ.դ., պրոֆ. **Վ.Ռ.Բալայան**, ի.գ.դ. **Վ.Վ.Գրուզդե**, ի.գ.դ., պրոֆ. **Ա.Յ.Խաչատրյան**, ք.գ.դ., պրոֆ. **Մ.Մ.Սարգսյան**, ք.գ.դ. **Ս.Ս.Մինասյան**, տ.գ.դ., պրոֆ. **Յ.Լ.Սարգսյան**, պ.գ.թ., դոց. **Ն.Է.Բաղդասարյան**, ք.գ.թ., դոց. **Խ.Ս.Գալստյան**, տ.գ.թ., դոց. **Ե.Ռ.Հայրիյան**, ի.գ.թ. **Ա.Յ.Հարությունյան**, ի.գ.թ., դոց. **Ա.Ա.Սանասյան**, ի.գ.թ., դոց. **Ս.Գ.Պետիկյան**

### **Редакционная коллегия**

д.ю.н., проф., акад. НАН РА **Г.С.Казинян** (председатель), д.ф.н., проф., член кор. НАН РА **А.С.Манасян**, д.п.н., проф. **Г.М.Аванесян**, д.и.н., проф. **В.Р.Балаян**, д.ю.н. **В.В.Груздев**, д.ю.н., проф. **А.Г.Хачатрян**, д.п.н., проф. **М.М.Маргарян**, д.п.н. **С.М.Минасян**, д.э.н., проф. **Г.Л.Саргсян**, к.и.н., доц. **Н.Э.Багдасарян**, к.п.н., доц. **Х.С.Галстян**, к.э.н., доц. **Е.Р.Айриян**, к.ю.н. **А.Г.Арутюнян**, к.ю.н., доц. **А.А.Манасян**, к.ю.н., доц. **С.Г.Петикян**

L 657 «ԼՂՀ (Արցախի) 25-ամյա պետականության ձեռքբերումներն ու արդի մարտահրավերները» միջազգային երիտասարդական գիտաժողովի կյութերի ժողովածու – Եր.: ԱԵԳՄՄ, 2016, 320 էջ:

Ժողովածուում ներառված են «ԼՂՀ (Արցախի) 25-ամյա պետականության ձեռքբերումներն ու արդի մարտահրավերները» խորագրով միջազգային երիտասարդական գիտաժողովի կյութերը:

В сборнике включены материалы международной молодежной научной конференции «25-летие государственности НКР (Арцах): достижения и современные вызовы».

ՀՏԴ 94(479.25):32.001:342:06  
ԳՄԴ 63.3 (53)+66.0+67.400

ISBN 978-9939-1-0465-2

© Արցախի երիտասարդ գիտնականների և  
մասնագետների միավորում, 2016

# ՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԱՆՁԻ ԻՆՔՆԱԻՐԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

## Ռոզալյա ՅԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱրՊՀ «Մանկավարժության և հոգեբանության» ամբիոնի ասիստենտ և հայցորդ,  
ՄՄՀ «Մանկավարժության և հոգեբանության» ամբիոնի ասիստենտ  
Էլ. փոստ՝ [avrozali@mail.ru](mailto:avrozali@mail.ru)  
Գիտական ղեկավար՝ Ի.Գ.Պ., պրոֆեսոր Նաիրա Յակոբյան

Անվտանգություն հասկացությունը վերջին տարիներին ձեռք է բերել ոչ միայն հանրային, այլև համաշխարհային նշանակություն: Անվտանգությունը՝ բարդ, բազմաբովանդակ, բազմակառույց, կենսաապահովական համակարգ է, որը ամեն առումով փոխկապակցված է կյանքի կարևոր ասպեկտների հետ: Հոգեբանական անվտանգությունը մեծապես հիմնվում է անձի սուբյեկտիվ աշխարհընկալման, Եմոցիոնալ ոլորտի կայունության, անձնային փորձի, հոգեկանի գործունեության առանձնահատկությունների, բնավորության և խառնվածքի վրա: Մենք ենք իրականում հուզազգացմունքային գերծանրաբեռնվածություն ստեղծում և հայտնվում վտանգի զգացման տիպի վիճակում:

Անվտանգությունը սոսկ նեղ գիտական կատեգորիա չէ և ոչ էլ միայն նեղ մասնագիտական խնդիր: Հիրավի, այն այսօր, պետք է դառնա հանրային գաղափարական ստրատեգիա: Մի շարք զարգացած պետություններում դիտարկվում և կարևորվում են «անվտանգություն» հասկացության մի քանի կատեգորիաներ, որոնցից են՝ տեղեկատվական, ազգային, սոցիալական և հոգեբանական անվտանգությունը:

Ն.Կ.Մուզուլովը նշում է. «...անվտանգությունը հիմնականում կարելի է բնութագրել որպես նշանների մի համակարգ, որը բնութագրում է անվտանգության մշտական իրավիճակը, երբ անձը պաշտպանված է սպառնալիքներից ու վտանգներից, որոնց ազդեցությունը կարող է չափազանց բացասական անդրադառնալ նրա կառուցվածքային և ֆունկցիոնալ կառույցի վրա, ամբողջականության զգացողության վրա, մինչև նրա լրիվ ոչնչացումը»:<sup>1</sup>

Ըստ Աբրահամ Մասլոուի հումանիստական տեսության՝ յուրաքանչյուր անձի բազային պահանջմունքների կամ պահանջմունքների աստիճանակարգի ամենաբարձր պահանջմունքը ինքնաիրացումն է: Անվտանգությունը դիտարկելով որպես բնականոն պահանջմունք պետք է շեշտենք, որ այն իր մեջ նույնպես՝ հոգևոր, կենսաբանական, սոցիալական պահանջմունքներ է ներառում: Ա. Մասլոուն<sup>2</sup> նշում է, որ նախ և առաջ

<sup>1</sup> *Музулов Ф. К.*, Безопасность личности: теоретические и прикладные аспекты социологического анализа: монография. –Сочи, 2003,стр 45

<sup>2</sup> *Маслоу А.*, Психология бытия. М.: «Рефл-бук» – К.: «Ваклер», 1997 К.: PSYLIB, 2003 Перевод О.Чистякова под редакцией В.Данченко

պետք է բավարարվեն նախնական կամ բազային՝ ամենացածր պահանջները, ապա նոր անցնեն ըստ աստիճանակարգի ավելի բարձրադիր պահանջներին:

Այսպիսով, կա հետաքրքիր առանձնահատկություն. շատ քիչ մարդիկ են հակված ինքնաիրացման (բուրգի ամենավերին պահանջմունքը) և ողջ կյանքի ընթացքում անձը այդպես էլ չբավարարել այն: Ընդհանուր առմամբ ողջ մարդկության միայն 10 %-ն է հասնում լրիվ ինքնաիրացման:

Մենք ունենք մեկ հայրենիք՝ Հայաստան, սակայն մեր՝ արցախցիներին ծննդավայրն ու սուրբ հողը Արցախն է, եթե մենք հավատարիմ չենք մնում մեր արժեքներին, սրբություններին ու մեր ժողովրդի ու պետության համար ծանր օրերին թողնում ու հեռանում ենք, ապա մենք դեգադապտացված ենք: Եվ էլ խոսք չի կարող լինել էթնիկական բարձր ինքնագիտակցության ու հասունության մասին: Հոգեբանական անվտանգությունը դիտելով որպես ինքնաիրացման կարևոր պայման, կարող ենք ասել, որ այն ունի և՛ խաթարող, և՛ խթանող պայմաններ: Դիտելով այն որպես խթան կարող ենք հանգել այն դրույթին, որ հոգեբանական անվտանգությունն ու պաշտպանվածության գագուցումը պարարտ հող են ստեղծում ավելի «բարձր» պահանջմունքների արթնացման համար: Դրանք էլ իրենց հերթին մղելու են անձին ինքնաիրացման և անձնային ռեզերվների, կարողությունների ու հմտությունների զարգացմանը:

Ի.Ա.Բաևան համարում է, որ անվտանգություն հասկացությունը իր մեջ ներառում է նաև. «...անձի կարողությունների իրականացում, հայացք դեպի կենսական դժվարություններ, փորձություններ, նրա կարևորությունն ու նշանակալիությունը հատկանշող միջոցների ամբողջություն»:<sup>1</sup> Ու քանի որ ինքնաիրացումը դիտվում է որպես մարդու կարողությունների ու անձնային պոտենցիալի իրացման գործընթաց, ապա կարող ենք եզրակացնել, որ հոգեբանական անվտանգությունը ապահովվում է նաև ինքնաիրացման գործընթացում:

Հոգեբանական անվտանգության հետ կապված ցանկացած խնդիր կարող է լուրջ ազդեցություն ունենալ մարդու կենսագործունեության վրա, սահմանափակել նրա լայնածավալ հնարավորությունները, ստեղծել բազմապիսի խնդիրներ ու խոչնդոտել նրա գործողությունները: Վերոնշյալը ունի ոչ միայն արտաքին չափորոշիչներով պայմանավորված վտանգ, այլև ԲՆՀ-ի (բարձրագույն նյարդային համակարգ) և հոգեկանի քայքայման կոնստրուկտիվ պայմաններ է ստեղծում:

Արիլյան քառօրյա պատերազմի ընթացքում, ինչպես ականատես եղանք, անվտանգությունը դիտվեց ոչ միայն զուտ անձնային խնդիր և ցածրադիր պահանջմունք, այլև պետական մակարդակի լուրջ ազգային անվտանգության ապահովման, ռազմավարական նշանակության օրակարգային հարց: Ազգային մոբիլիզացիան, համայն հայության միասնությունն ու ոգու համալրումը բերեցին նրան, որ մենք հաղթանակ ունեցանք

<sup>369</sup> *З.Баева И. А.*, Психологическая безопасность в образовании: монография. – СПб., 2002, стр.50

ոչ միայն ռազմի դաշտում, այլև թիկունքում:

Անձի հոգեբանական անվտանգության ուսումնասիրումը նախ և առաջ կապված է մարդու պահանջմունքների բավարարման և կյանքի իմաստավորման հետ: Այն, որպես առաջնային դրդապատճառ, ընկած է մարդու կյանքի ռազմավարության հիմքում:<sup>1</sup> Եթե անձի հոգեկանին արտաքին որևէ վտանգ է սպառնում, անմիջապես ակտիվանում են հոգեբանական պաշտպանական մեխանիզմները, որի գործունեության ընթացքում տեղի է ունենում կյանքի կամ որևէ այլ արժեքի վերաիմաստավորում, վերափոխում կամ տրանսֆորմացիա, և նույնիսկ արժեզրկում կամ դևալվացիա:

Ժողովրդի համար ծանր ապրիլյան այդ օրերին շատ մայրեր ու նորաթուխ այրիներ կորցրել են իրենց կյանքի իմաստը, չկար ապրելու ու պայքարելու ձգտում, արժեքները մնացել են նույնը, սակայն վտանգի տակ, չկար վաղվա օրվա երաշխիք, անպաշտպան և անօգնական վիճակ, որը խիստ տիպական է նման իրավիճակներում: Եվ շատ կարևոր է նման իրավիճակներում նոր արժեքներ որոնել, կամ վերաիմաստավորել հիևը՝ ապրելու և պայքարելու համար: Մենք կրկին համոզվեցինք, որ ֆիզիկական անվտանգությունը ինքնին պայմաններ է ստեղծում ճիշտ հոգեբանական անվտանգության զարգացման համար: Անձի հոգեբանական անվտանգությունը հասկացությունը կարելի է նույնացնել մի շարք այլ հասկացությունների հետ, որոնցից են հոգեկան առողջությունը, զարգացման գոտին, սթրեսի հաղթահարման մեխանիզմները, կենսակայունությունը, կյանքի որակը և այլն: Սակայն անձի հոգեբանական անվտանգությունը ներառում է ոչ միայն հոգեկանի բովանդակության կայունությունը, այլև սոցիալական միջավայրի և հասարակության հետ հարաբերություններում անձի կայունությունը:<sup>2</sup> Ուստի անձի հոգեբանական անվտանգությունը պայմանավորում են մի շարք կարևոր գործոններ, որոնցից են Էտալոնային խումբը, սոցիալական միջավայրն ու նրա ունեցած ազդեցությունը, տեղեկատվության ահռելի հոսքը (ՉԼՄ-ները) որը ինքնին սթրեսագետն է և օրգանիզմի ներքին պաշարները՝ ֆիզիկական առողջությունը: Ինչ վերաբերում է վերջին պայմանին, ապա միայն հիմա՝ 3,4 ամիս անց/ ապրիլյան իրադարձություններից/ կարող ենք ասել, որ մեր առողջականը զգացնել է տալիս այդ ամիսների ընթացքում կուտակած սթրեսները՝ հիվանդությունների կրկնակի աճի, վաղաժամ ծննդաբերությունների, կեսարյանների աճի, մանկական ֆոբիաների ու կակազությունների աճի տեսքով:

Առաջին ու ամենասարսափիչ վայրագությունը ապրիլի 2-ին ժամկետային զինծառայող Զյալամ Սլոյանի գլխատումն էր, որը ահ ու սարսափ տարածեց և պետք է խուճապի մատներ հայ զինվորների: Սլոյանին գլխատած ադրբեջանցին, ինչպես գիտենք, պարզևատրվեց նախագահի կողմից:

<sup>370</sup> Անձի կենսագործունեության հոգեբանական անվտանգություն //կոլեկտիվ մենագրություն, հեղ.՝ **Ռ. Վ. Աղուզումյան, Վ. Ռ. Պապոյան, Ա. Ս. Գալստյան, Ե. Բ. Մուրադյան, Դ. Յ. Սարգսյան, Ծ. Ս. Ամիրյան** // Եր., ԵՊՀ հրատ., 2015, 142 էջ, էջ 25

<sup>371</sup> <https://hy.wikipedia.org/wiki/Մասնակից:ԴիանաՍարգսյան/sandbox>

Ինչ վերաբերվում է հոգեբանական առողջությանն ու անվտանգությանը ՀԼՄ-ների ազդեցության համատեքստում, ապա հստակ կարող ենք ասել, որ դրանք ոչ միայն կարևոր, այլև վճռորոշ դերակատարություն ունեն այս գործում: Ինքնաիրացման, զարգացման, ներքին աճի ու ինքնահաստատման գործընթացը անբակտելիորեն փոխկապակցված է նոր ինֆորմացիայի յուրացման հետ: Այս ամենը շատ դրական մոտիվացնող բարեփոխումներ են, սակայն այս մեղալն էլ ունի իր հակառակ և ոչ կոնստրուկտիվ կողմը, փորձենք պարզել ո՞րն է դա:

Առաջին հերթին նոր ինֆորմացիան միշտ չէ որ դրական ու մոտիվացնող է և այն հանգամանքը, որ անձը մշտապես գնվելով տեղեկատվական հոսքում շատ դեպքերում կտրվում է շրջապատող իրականությունից այսինքն խզում է առաջանում վիրտուալ և շրջապատող իրականության միջև: Մշտապես ամեն ինչից տեղյակ լինելու ու ավելի «աճելու» պահանջը հիմնականում անձին կախվածության մեջ է դնում տեղեկատվական անկառավարելի հոսքից և անշուշտ ազդում է մարդու նորմալ կենսագործունեության վրա՝ զրկելով առողջ քնից, սննդի ընդունումից, բնականոն ռեժիմից և այլն: Այս ամենը, անշուշտ, ուղեկցվում է բարձր լարվածությամբ, մշտական հոգնածությամբ, ինչպես և գերհոգնածությամբ, բազմաբնույթ սթրեսներով, ներոզներով ու տագնապայնության բարձր մակարդակով:

Այսպիսով կարող ենք եզրակացնել, որ հոգեբանական անվտանգությունն ու առողջությունը մեծապես նպաստում են անձի ինքնաիրացման ու կատարելագործմանը, ներքին հոգեբանական աճին, առողջ «ես» և առողջ միջավայր շրջանակներում: Սակայն տարաբնույթ տագնապները, լարվածությունն ու սթրեսները նույնիսկ արդեն իսկ ակտիվացրած գործընթացը կարող են սահմանափակել և խաթարել: Հոգեբանական անվտանգությունն ու պաշտպանությունը ավելի հրատապ հարցեր են և դրանց գլոբալիզացիան կնպաստի ընդհանուր կենսամակարդակի բարձրացման և հոգեբանական առողջության ամրապնդմանը:

### ***Ռոզալյա Հարությունյան***

## **ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԴԵՐՈ ԱՆՁԻ ԻՆՔՆԱԻՐԱԾՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ**

**Բանալի բառեր՝** *հոգեբանական անվտանգություն, ինքնաիրացում, պահանջմունքներ, ֆիզիկական և հոգեբանական առողջություն*

Սույն հոդվածում հակիրճ ձևով փորձել ենք ներկայացնել անվտանգություն հասկացության մի քանի հարցեր՝ հիմնականում այն, թե հոգեբանական անվտանգությունը ինչպես է ազդում անձի ինքնաիրացման վրա: Դիտարկելով և՛ խթանող, և՛ խաթարող դրույթները, եկել ենք այն եզրակացության, որ թեկուզ «վտանգավոր» պայմանները ստիպում են անձին ակտիվացնել նրա ռեսուրսները, այնուամենայնիվ հոգեբանական առումով

առողջ և ապահով պայմաններում է միայն անձը ձգտում ավելի բարձր արժեքների: Հոգեբանական անվտանգությունն ու պաշտպանությունը դիտելով որպես արդիական ու հույժ հրատապ կարող ենք նշել, որ դրանք խիստ կարևոր են անձի նորմալ կենսագործունեության, հոգեբանական առողջության և կայունության համատեքստում:

*Розалия Арутюнян*

## **РОЛЬ ПСИХОЛОГИЧЕСКОЙ ЗАЩИТЫ В УСЛОВИЯХ ЛИЧНОСТНОЙ САМОРЕАЛИЗАЦИИ**

**Ключевые слова:** *психологическая безопасность, самореализация, потребности, физическое и психологическое здоровье*

В данной статье попытаемся кратко ввести понятие безопасности по нескольким вопросам, в основном воздействие психологической безопасности на личностную самореализацию. Наблюдая и стимулирующие и приостанавливающие воздействия, мы пришли к выводу, что хотя “опасные” жизненные условия заставляют человека активировать свои ресурсы, однако только в психологическом смысле здоровых и безопасных условий человек ищет более высокие смыслы и значения. То есть, лишь с начала удовлетворяя основные потребности, человек растет, развивается и достигает глубоких моральных ценностей и целей, в том числе самореализации. Изучая психологическую безопасность и оборону, как весьма актуальные и неотложные вопросы, мы можем сказать, что они очень важны для нормальной жизнедеятельности человека, в контексте психологического здоровья и устойчивости.

*Rozaly Harutyunyan*

## **THE ROLE OF PSYCHOLOGICAL SECURITY IN PERSON’S SELF- REALIZATION**

**Keywords:** *psychological security, self-realization, demands, physical and psychological health*

In this article we tried to introduce you in a concise way some questions of security concept, basically how psychological security effects on the self-realization of a person. Observing both stimulating and disruptive statement we came to the conclusion that though “dangerous” conditions make person activate its resources, in a psychological aspect a person tends to higher values only in healthy and safe conditions. It means that satisfying his basic needs at first the person grows, develops and reaches deep moral values and aims as well as self-realization. Observing psychological security and protection we can mention that they are extremely important for person’s vital activity, psychological health and stability.